ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT
OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF
DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ ԼՄՊՊ/2233
«29» 07 2021թ.

«ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ» ԱՁ-ին
(ՀՎՀՀ 30926334)
հասցե՝ ՀՀ, ք.Վաղարշապատ, Պատկանյան 52
էլ. հասցե՝ arsenhovhannisyan.86@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ» ԱՁ-ի միջև 18.05.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-8/4-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր կողմից 2021թ. երկրորդ եռամսյակում պետք է մատակարարվեր 200 (երկու հարյուր) հատ «Ռազմական համագործակցության համար» մեդալ, որը չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հուլիսի 29-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ» ԱՁ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 1 332.5 (հազար երեք հարյուր երեսուներկու ամբողջ հինգ) ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական՝ 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 53 300 (հիսուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ (պայմանագրի կատարման ապահովում)՝ որպես տուժանք, և 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 79 950 (յոթանասունինը հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ (որակավորման ապահովում)՝ որպես տուժանք:

Ն. ՅՈԼՉՅԱՆ